

նին մօտեցաւ եւ սրուակ մը օղի անոնց տուաւ : Մենք այդ ծերունիին հարցուցինք թէ խնդիրը ի՞նչի մէջ կը կայանայ . անիկա պատասխանեց խնդարով .— քիւրտերը վատ մարդիկ են , բայց մենք վախնալիք բան մը չունինք . այն հին բարեկամութիւնը որ կայ անոնց միջեւ , եւ այն մեծ յարգանքը որ քրտերն ունին վանահօր հանդէպ , մեզ կը պաշտպանէ ամէն բանէ : Եւ իրօք , ուսել խմելէ յետոյ , անոնք քաջուեցան դնացին , եւ վանահայրը մեզ մօտ վերադարձաւ շատ ուրախ դէմքով : (P. de Tournefort, Relation d'un Voyage du Levant. II հատոր , էջ 115-116) :

Այդ ժամանակաշրջանի անցքերու պարզ քննութենէ մը կ'երեւի , որ այն շրջանները , որոնք հետուն ինկած են թրքական իշխանութեան կեդրոններէն եւ ոտքի կոխան չեն եղած ենիչէրիներու սանձարձակութեանց , կրցած են զանդուածօրէն ապրիլ , թէեւ երբեմն ենթարկուած են քիւրտերու թշնամանքին , որ սակայն , թրքական բնաջնջող բնոյթը երբեք ունեցած չէ :

Յովսէփ Էմինն ալ իր գրքի մէջ կը յիշատակէ , որ երբ ինք Տաճկահայաստանէն կը ճամբորդէր Կովկաս անցնելու համար , էրզրումի շրջանէն անցած ատեն , Մուշէն եւ Բիթլիսէն եկող հայերու կը հանդիպի : Անոնք իրենց շրջանին տիրապետող քիւրտ իշխանապետութեան բռնակալութիւններէն կը դանդատին , բայց կ'աւելցնեն որ կատարեալ ապահովութիւն կայ , որ «ոսկի գլխուդ դնելով կարող ես պտտիլ» : Իշխանապետը կարող է բռնակալ եղած ըլլալ , բայց իր շրջանի մէջ կարգ ու իշխանութիւն հաստատած է , որպէսզի ամէն ոք ինքնազուլուս կողոպուտի եւ կոտորածի չձեռնարկէ :

Մինչդեռ , ինչպէս տեսանք Դարանաղցուն կարագրութիւններէն , էրզրումէն մինչեւ Սեբաստիա , եւ աւելի հարաւային գաւառները անիշխանութիւնը եւ ներքին ապստամբական կռիւները անպակաս էին 1550-ական թուականներէն սկսած : Հայ ժողովուրդը հետզհետէ այդ շրջաններուն մէջ կը հալէր , ու անոնք որ կ'ուզէին իրենց Ֆիզիքական գոյութիւնը պահպանել զանդուածօրէն կը գաղթէին դէպի Պոլիս եւ Պալքանները : Բնական է որ այս հալա-

ծանքները դառնութեամբ լեցնէին հայ դանդուածներու սրտերը ընդդէմ ե՛ւ ենիչէրիներու , ե՛ւ քիւրտ Ջէլալիներու , որոնց ապստամբութիւնները Ղըզըլբաշներու (Տըմբալիկ) կորովի շարժումներու պատմութիւնն է : Բայց այդ շարժումները անիննայօրէն ճնշուեցան եւ 18-րդ դարու սկզբին , Տէրսիմն իր շրջանով միայն կրցաւ կէս անկախ գոյութիւն մը պահպանել :

Հայերը դառնութեամբ լեցուած կոռուղ երկու կողմերուն դէմ , ամէն կողմ կը ցրուէին եւ իրենց թշնամութիւնը կը փոխանցէին սերունդէ սերունդ , մանաւանդ որ երկրի ներքո տիրող անապահովութիւնն ու հալածանքը կը շարունակուէր : Դարանաղցին երկրի դատարկման մասին խօսելով կը գրէ .— «... Եւ յորժամ ի Կաֆայէն յՆստամբոլ եկանք , են ամենայն հայոց աշխարհքն ի Թէոզուպոլէն ի վայր , ոմանք երկու ամառ յառաջ եկեալ էին եւ ոմանք բազումք ընդ մեզ եկին , որ էր 1605-ին , եւ շատ այլք յետոյ եկին եւ ցրուեցան յԱնատոլ , եւ յԱռուսթէլ , յամենայն քաղաքս մինչի Պէլլըրատ . մինչ Պուզտանաց աշխարհքն եւ ի Լեհաց » : («Ժամանակագրութիւն» , էջ 69) :

16-րդ եւ 17-րդ դարու զարհուրելի քաոսի հետեւանքով հայկական շատ մը գաւառները դատարկուած էին . հայութեան թիւը չնչին քանակի մը իջած էր : 18-րդ դարու տեղեկատուններու մօտաւոր թիւերը շատ աննպաստ դադափար մը կուտան հայ դանդուածի քանակի մասին : Օրինակ Տուրնըֆօր կը հաղորդէ հետեւեալը .— «Կը կարծուի որ էրզրումի մէջ կան 18,000 թուրքեր , 6,000 հայեր եւ 400 յոյներ » : Նոյն տեսակ վիճակագրական տեղեկութիւններ կան նաեւ միջին նահանգներու մասին , բայց աւելորդ կը նկատեմ մէջ բերելը : Ընդհանրապէս կարող ենք ըսել , որ մինչեւ 18-րդ դարու սկիզբը , հայկական գաւառները զօրաւոր արտագաղթի դիմած են , կամ սանձարձակութիւններու զոհ երթալով՝ հալած են :

18-րդ դարուն , հետզհետէ կայուն դրութիւն մը կը ստեղծուի : Մէկ կողմէ ենիչէրիները կը կոտորուին եւ ազդեցութենէ կ'իյնան , ու կը հեռացուին այն փաշաները , որոնք ամբողջովին անոնց ենթակայ էին . միւս կողմէ ,